

# Մեակրոլիթ

## Ազգային առաքելության իրականացման ճանապարհին

### Պերճ Սեդրակյանը հանդիպեց հայ գրողներին. արժարժվեց նաև Մելգոնյանի հարցը

Երեկ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ Պերճ Սեդրակյանը հանդիպեց Հայաստանի գրողների միության անդամների հետ: «Այսօր Հայաստանում ՀԲԸՄ-ն իսկապես կենսական նշանակության ծրագրեր է իրականացնում: Շահ զնահատելի է այն վերաբերմունքը, որ հասկապես վերջին տարիներին Հայկական բարեգործականը ցուցաբերել է հայ գրականության, հայ գրողի նկատմամբ», ասաց Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը: Նա գրողների միության բոլոր անդամների անունից շնորհակալություն հայտնեց Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ իրենց իրականացրած բոլոր ձեռնարկների համար:

Իր ելույթում Պերճ Սեդրակյանը նշեց, որ իրենց համար Հայաստանի գրողների միությունը մնում է ամենակարևոր հաստատություններից մեկը ազգային առաքելության ծրագրերի շարունակության համար: «Վստահ եմ, որ մեր ունեցած բոլոր դժվարությունները լիարժեք կարողանան դիմագրավել, եւ ազգադատական ամենակարևոր ազգակերպող միջին հայ գիրը, հայ լեզուն, հայ գրականությունը», ասաց նա:

Այսօր ՀԲԸՄ-ն եւ Հայաստանի գրողների միությունը ժամանակակից հայ



գրականությունը թարգմանաբար ներկայացնելու համատեղ ծրագիր ունեն: «Ժամանակակից հայ տղեզիա», «Ժամանակակից հայ արձակ» եւ «Ժամանակակից հայ թատերգություն» հասորներով լույս կեսնի այսօրվա հայ գրողների ստեղծագործությունների ընթացումն անգլերեն լեզվով: Յուրաքանչյուր հասորի համար Հայկական բարեգործական ընդհանուր միությունը կհամարի 3.000-ական ԱՄՆ դոլար, թարգմանությունները կկատարվեն հանրառեւության լավագույն թարգմանիչների կողմից: «Սա Գրողների միության իր իսկ անդամների ստեղծագործությունները համահավաք էլ թարգմանաբար ներ-

կայացնելու առաջին փորձն է, ասաց ՀԲԸՄ ֆաբրիկայի Հովհաննիսյանը: Եւ մեր գրականությունը միջազգայնացնելու, ազգային դիմագրծը համաաշխարհային համայնությանը ներկայացնելու լուրջ ֆայլ է»:

Բնականաբար, գրողների միության անդամներին հետաքրքրում էին դարգաբանումները, որ կհար ՀԲԸՄ նախագահը Մելգոնյան կրթական հաստատության փակման վերաբերյալ: Տաղանդավոր արձակագիր եւ թարգմանիչ Կարոյիս Աւրեւյանը, որ 1938-45 թվականներին ուսանել է Մելգոնյան կրթական հաստատությունում, ասաց. «Մի մարդու համար, որ ողջ դասակարգությունն այնտեղ է

անցկացրել, դաստերազմի ժամանակ հող է մշակել, ծառ է տնկել, ծանր է այդ լուրը: Երբ դաստերազմի տարիներին դուրսը փակելու խնդիր կար, ողջ ազակերտությունը, ուսուցչական կազմը, դեկավարությունը ամեն զոհողության գնաց, որ դուրսը չփակվի, մեմ օրվա իսկ կուլերի համար սահմանված որոշած բակլավերում: Այժմ ի՞նչն է ձեզ մղել այդպիսի ֆայլի: Արդյո՞ւր ի՞նչն է ձեզ մղել այդպիսի «ժամանակակից հայ տղեզի» ծանր են»: Նա նաև մտախոհություն հայտնեց, որ Կոլոտուս ման հաստատություն փակելը կնշանակի մի բույն չհացնել, որ կարող էր հայ ոգին դառնալ Մերձավոր Արեւելու: ՀԲԸՄ նախագահն ասաց, որ իրենք առաջադրված բոլոր մտախոհությունները հաշվի են առել, ֆնտրվել, սակայն կան օրյեկտիվ դասձառներ: «Ողջ աշխարհը փոփոխությունների է ենթարկվում, եւ մեմ լիք է համադասաստան ֆայլեր կատարենք, ասաց նա: Մելգոնյան կրթական հաստատությունը իր դասական մեծ դերը կատարել է անցյալում, եւ մեր կենսոնական վարչության համոզումն է, թե մերկա մեր հայ իրականության առջեւ հայրենիքի անկախությունից, Միջին Արեւելու հայության մոտանալուց հետո լիք է վերանայենք մեր ծրագրերը: Վստահ եղեմ, որ մեր կազմակեր-

տության եւ կենսոնական վարչության համար շահ դժվար եւ ծանր որոշում էր, եւ եթե մեմ դասաստատության ոգին չունենայինք, ամենից դուրսն որոշումը կլինեք ոչինչ չփոխել, չփակել»: ՀԲԸՄ նախագահն ասաց, որ ծրագիր կա Հայաստանում Մելգոնյան կրթական կենտրոն հիմնել: Հույս ունեն, որ արհաստատության բոլոր գաղութներից երհասարդ ուսանողներ կզան հայրենիք: «Վստահ եմ, որ հայրենի հողին դրձալով, հայրենի հողին վրա այս ծրագիրը շահ ավելի լիքնական լիքնի ըլլա», ասաց նա:

Գրողների միության անդամները Պերճ Սեդրակյանին առաջարկեք եւս ունեքին: Օրինակ ցանկություն հայտնեքին օտար լեզուներով ժամանակակից հայ գրողների անթողգիաներ հրատարակել, վերադառնալ նախկին բարի սովորուքին, երբ Հայաստանից սփյուռք մանկական անսագրեր էին առաքվում, կազմակերպել Հայաստանում հրատարակված գրերի ցուցահանդես-վաճառներ:

Թե Հայկական բարեգործական ընդհանուր միության, թե Հայաստանի գրողների միության նախագահները կարեւորեքին միջ այս եղած համագործակցությունը եւ խոսակցան ցարունակել այն:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՅԱՆ